

## ՌԵԳԻՍՏՐԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Որպես ռեգիստրար կարող են հավատարմագրվել Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձինք: Որպես ռեգիստրար հավատարմագրվելու ցանկություն ունեցող անձը պարտավոր է ունենալ ինտերնետային կայք և այդ կայքում դոմենային անունների առցանց գրանցման ու սպասարկման համակարգ, որը պետք է առնվազն ունենա հետևյալ հնարավորությունները՝
  - 1) անձնական էջ բացելու,
  - 2) դոմենային անուն գրանցելու,
  - 3) դոմենային անուն վերագրանցելու,
  - 4) դոմենային անվան գրանցորդի վարչական, տեխնիկական և ֆինանսական կոնտակտների տվյալների (անուն, ազգանուն, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե) պահպանման և փոփոխություն կատարելու,
  - 5) դոմենային անունը գրանցելու կամ վերագրանցելու համար անհրաժեշտ գումարը վճարող անձի տվյալների (անուն, ազգանուն, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե) պահպանման,
  - 6) դոմենային անվան համակարգի սերվերի փոփոխություն կատարելու:  
*(1-ին կետը լրաց. 19.12.2023թ. N 13Լ որոշում)*
2. Որպես ռեգիստրար հավատարմագրվելու ցանկություն ունեցող անձը հավատարմագրման համար ներկայացնում է գրավոր դիմում:
3. Որպես ռեգիստրար հավատարմագրվելու ցանկություն ունեցող անձի դիմումը պետք է պարունակի՝
  - 1) այդ անձի լրիվ, իսկ առկայության դեպքում նաև՝ կրճատ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն), գործունեության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը, էլեկտրոնային փոստի հասցեն, գործադիր մարմնի (գործադիր մարմնի ղեկավարի) հեռախոսահամարը,

- 2) նշում ինտերնետային կայք ունենալու և ինտերնետային կայքի անվան մասին,
- 3) ցանցային հասցեների (IP հասցեների) ցանկը, որի միջոցով պետք է ապահովվի աշխատունակությունը ռեգիստրի ինտերֆեյսի հետ,
- 4) տեղեկություններ վարչական (ադմինիստրատիվ), ֆինանսական և տեխնիկական կոնտակտ համարվող անձանց մասին (անուն, ազգանուն, բջջային հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե),
- 5) նշում լուծարման գործընթացում չգտնվելու, սնանկ ճանաչված չլինելու և սնանկության վարույթում չգտնվելու մասին,
- 6) նշում [www.amnic.net](http://www.amnic.net) և [www.isoc.am](http://www.isoc.am) կայքերում հրապարակված՝ դոմենային անունների գրանցման գործընթացը և դոմենային անունների հետ կապված այլ հարաբերությունները նկարագրող նյութերի հետ ծանոթացած լինելու մասին,
- 7) որպես «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթների ռեգիստրար հավատարմագրվելու մասին խնդրանք (այն դեպքում, երբ անձը ցանկանում է դառնալ նշված տիրույթներից որևէ մեկի ռեգիստրար նշվում է համապատասխան դոմենային անունների տիրույթը),
- 8) դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը,
- 9) այդ անձի գործադիր մարմնի (գործադիր մարմնի ղեկավարի) ստորագրությունը,
- 10) դիմումը կազմելու ամսաթիվը, ամիսը, տարին:

*(1-ին կետը լրաց. 19.12.2023թ. N 13I որոշում)*

4. Որպես ռեգիստրար հավատարմագրվելու ցանկություն ունեցող անձի ներկայացրած դիմումին պետք է կցված լինի այդ անձի պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը: